

**THE METHOD OF "NATURAL REASON"
IN THE INTERPRETATIONS OF BIBLICAL PROVISIONS
BY HOVHAN VOROTNETSY**

Anush Minasyan

*Candidate of Philosophical Sciences,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

In the biblical interpretations by Hovhan Vorotnetsy (1315-1388), in line with provisions of the Holy Scripture and authoritative viewpoints of fathers of the church and renowned theologians, a number of exegesis techniques of academic-research nature are employed, each of which performs a specific function, and deals with a specific task. They are all closely linked with Vorotnetsy's interpretation method of "natural reason", according to which the provisions and structural forms of Aristotle's logical doctrine are applied in interpreting biblical provisions. Thus, the medieval Armenian thinker strives to ensure the "academic justification" of the Christian dogmatics and theology via judgments in conformity with the laws and rules of Aristotelian logic.

Key words: Medieval Armenian Philosophy, Aristotelian logic, structural form of thought, Hovhan Vorotnetsy, interpretation, preaching, dogmatics, theology, academic content, science.

**ՊԱՌԱՄԵՆՏԱՐԻՋՄԻ ՄԿՁԲՈՒՔՆԵՐԸ
ԱՐԵՎԱՏԱՀԱՅ ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Լիլիթ Սարգսյան
Փիլիտփայական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Փիլիտփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ակադ գիտաշխատող**

Հայաստանի Հանրապետության քաղաքական ներկա
գործներացները միտված են խորհրդարանական կառավարման
ձևաչափի կայացմանը՝ ժամանակի պահանջներին համապատասխան։
Այս համատեքստում էական նշանակություն ունի հետազոտել XIX
դարում ծավալված արևմտահայ սահմանադրական շարժման

պատմությունը և պառլամենտարիզմի սկզբունքների մեկնաբանումն ու գործադրումը՝ օտար հպատակության ներքո:

«Ազգային Սահմանադրությունը» ընդունվել է 1860թ. մայիսի 24-ին Ազգային Ընդհանուր ժողովում և վավերացվել 1863թ. մարտի 17-ին Օսմանյան տէրության կայսեր կամքով և Բ.Շոան Հրամանագրով: Ազգային Սահմանադրությունը ոչ միայն պաշտոնապես ընդունվեց ու վավերացվեց, այլև արտոնվեց և պահանջվեց դրա գործադրությունը՝ որպես **հայոց ներքին գործերի վարչական կազմակերպման հիմնական օրինագիրը**: Այն ներառվեց օսմանյան պետական օրենսգրքի երկրորդ հատորում՝ իբրև հայերին **շնորհված** սահմանադրություն:

Ազգային Սահմանադրությունը կիրառվել է շուրջ հիսուն տարի: Բայց ժամանակ առ ժամանակ Հիմնական օրենքի գործադրությունը դադարեցվել կամ կասեցվել է՝ սահմանադրական որոշ դրույթների շուրջ ներազգային վեճերի ու անհամաձայնությունների պատճառով կամ Բ.Շոան կամայականությամբ: Այդպիսով՝ Ազգային Սահմանադրությունը գործել և դադարեցվել է հետևյալ ժամանակաշրջաններում.

➤ 1860 մայիսի 24 - 1861 հոկտեմբերի 17 - 1860թ. Սահմանադրության **գործադրության առաջին շրջան**,

➤ 1861 հոկտեմբերի 17 - 1863 մարտի 17 - Սահմանադրության **դադարում՝ «պետական հարվածի» միջոցով**: Բ.Շուն արգելեց Ազգային Վարչական ժողովների գործունեությունը:

➤ 1863 մարտի 17 - 1866 մարտ 20 - 1863թ. Սահմանադրության **գործադրության երկրորդ շրջան**, որն ավարտվեց **«պետական երկրորդ հարվածով»** և Ազգային Վարչական ժողովների գործունեության կասեցմամբ:

➤ 1869 դեկտեմբեր 9 - 1891 սեպտեմբեր 4 - Սահմանադրության **գործադրության երրորդ շրջան**,

➤ 1891 սեպտեմբեր 4 - 1896 հուլիս 21 - Ազգային ժողովի գործունեության **դադարման շրջան**:

➤ 1896 հուլիս 21 - 1896 հոկտեմբեր 31 - Բ.Շոան **«երրորդ հարվածը»**, որի հետևանքով կասեցվեց Սահմանադրության գործադրությունը:

➤ 1896 հոկտեմբեր 31 - 1908 հուլիս 10 - Ազգային ժողովի գործունեության **դադարման շրջան**, որի ընթացքում գործում էին միայն Քաղաքական, Կրոնական ու Խառը ժողովները:

» 1908 հուլիս 10 - 1915 ապրիլ - Սահմանադրության գործադրման վերջին շրջան: Անկախ քուրքական քաղաքականության բացասական ազդեցությունից՝ **հարց** սահմանադրական կեցության 50-ամյակը նշանավորվում է որպես ազգային առաջադիմության, սահմանադրական-քաղաքական մշակույթի զարգացման պատմաշրջան:

Ի հակադրություն օսմանյան աստվածապետության բռնատիրական վարչակարգի՝ արևմտահայ մտավորականներն ընտրեցին **ինքնակառավարման** **իսլամական-սահմանադրական սահմանադրական ուժին:** Անդրադառնալով այս ընտրությանը՝ Ս. Խորհմանը փաստարկում է հակասական ու հարափոփոխ ժամանակի խորհուրդը՝ այն գնահատելով իբրև «...ժամանակ ստրկութեան եւ ժամանակ ազատութեան... ժամանակ կործանելոյ եւ ժամանակ կանգնելոյ. ժամանակ ինքնահրաման պէտութեան եւ ժամանակ Սահմանադրութեան»¹:

Այդ բարդ պատմաշրջանում հույժ կարևոր էր քաղաքական ճիշտ կողմանությումը, որի եւսկետն ազգային ինքնության (ազգայնության) պահպանումն էր՝ որպես անփոփոխելի օրենք: Առկա կեցությունը ծնել էր ազգի՝ իր բոլոր հատկածների երեմնի միությունն անկախության իրավունքով վերահաստատելու բնական ձգություն: Ըստ հայ գործիչների՝ քաղաքական ճիշտ ուղին Ազգային սահմանադրության ընտրունակը՝ սահմանադրական կարգի հաստատումն է, սահմանադրականության սկզբունքներով սահմանադրական ազգի կերտումը: Հ. Խփեկճանի մեկնաբանությամբ՝ **սահմանադրական կարգ** («ըրութիւն»)՝ նշանակում է «ազգէն բխեալ», ընտրված և ոչ ժառանգական իրավունքով փոխանցված իշխանության հաստատում: Մերվիշենի համոզմամբ՝ **ընտրված կառավարությունը անենակորված ազգն է** նրա իրավունքների մարմնավորողը. «Ան վայրկեանին որ ազգին կառավարութիւնը յանձն առիր, ան ատենին պէտք է որ բոլորովին ազգը դրւն ըլլաս»²:

Ըստ հայ մտածողների՝ **սահմանադրական իրավունակությունը գերազույն արժեք է՝** ազգի ինքնակառավարման ազատության, իրավունքների ճանաչման և օրինական գործադրման իրավական կեցության հիմքը: Լինել սահմանադրական («ինքնօրեն»)՝ նշանակում է կառավարվել սեփական ազգային օրենքներով: Ս. Աղաբեկյանի

¹ Խորհման Հայրիկ, Ժամանակ և Խորհրդություն իր, Ամբողջական Երկեր, Նիւ Եորք, 1929, էջ 241:

² Վիշենեան Ս., Բարոյական սկզբունք, Կ.Պօլիս, 1851, էջ 38:

հաստատմամբ՝ Օսմանյան տերության մեջ Հայը՝ որպէս **ազգ** կամ «ազգային ընկերականութիւն» կարողացել է «ինքնիրմով» պահպանվել, զարգանալ ու կառավարվել շնորհիվ երեք գործոնի: Դրանք են. «Ա. Հայոց նախնական եւ ինքնօրէն եկեղեցին իր ազգային կերպարանքով, Բ. Հայոց ընտանիքական ընկերականութիւնը, իւր յատուկ ամուսնական սուրբ օրենքովը, Գ. Իր հրապարակական դաստիարակութիւնը, իր ազգային լեզուին ու դպրութեամբը»³: Այդպիսով՝ հպատակության պայմաններում **Հայ եկեղեցին, ընտանիքն ու կրթադասիարակական համակարգն** ազգապահպանման բնական հիմքն են և ազգի ինքնակառավարմանն անհրաժեշտ գործոնները: Իբրև ազգի անօտարելի իրավունքներ՝ դրանք ամրագրված են Սահմանադրության 1860թ. և 1863թ. տարբերակներում:

Ազգային Սահմանադրության մեջ սահմանված է ազգային վարչության կառուցակարգը: Սահմանադրական հայեցակետով՝ **իշխանության աղյուսը, կրողն ու գերիշխանն ազգն է** և վարչական բոլոր մարմինները պատասխանատու են ազգի առջև: Ազգային վարչությունը սահմանադրված է **իստոք կառավարման ձևաչափով**, որում համարված են սահմանադրական միապետական (ազգապետական), խորհրդարանական և ժողովրդապետական սկզբունքները:

Խորհրդարանական կառավարումն իրականացվում է **կենտրոնացման և ապակենաբռն սկզբունքների համադրությամբ**, ինչը դրսերվում է կենտրոնական և տեղական (գավառական) իշխանությունների ուղղահայաց ու հորիզոնական հարաբերություններով: **Կենտրոնական իշխանությունը** ներկայացնում են Ազգային Ընդհանուր ժողովը, Քաղաքական և Կրոնական ժողովները, Պատրիարքը, Ազգային խորհուրդներն ու հոգաբարձությունները, Թաղական խորհուրդները: **Գավառական իշխանությունը** ներկայացնում են գավառական ժողովները՝ թեմական առաջնորդների նախագահությամբ: **Ազգային կառավարության** օրենսդիր ու գործադիր բոլոր գերատեսչությունների պաշտոնական գլուխը՝ **Պատրիարքն է**, իսկ կենտրոնը՝ **Կ. Պոլսի Պատրիարքարանը**: Ազգային իշխանության իրավասությունները տարածվում են Օսմանյան պետության հպատակ բոլոր հայերի վրա:

Ուղղահայաց **հարաբերակցությամբ** վարչական աստիճանակարգի առաջին աստիճանին **Ազգային ժողովն է**

³ Ատենագրութիւնը Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ 1870 -74 նստաշրջանի.- Կ. Պօլս, 1874, էջ 385:

կենտրոնական իշխանության բարձրագույն և օրենսդիր մարմինը: Խորհրդարանական կառավարման համակարգում զլիսավորը **ներկայացուցական սկզբունքն** է, որը սահմանված է Սահմանադրության հենց առաջին հոդվածում. «Ազգային վարչութիւնն երեսփոխանական է: Ազգն ընդհանուր ժողովով մի կներկայանայ և անոր միջնորդութեամբն կպարէ զազգային իշխանութիւնն»⁴: Հստ 1860թ. Սահմանադրության՝ Ազգային ժողովը բաղկացած է **220** անդամից, որից **160**-ը ընտրվում է Կ.Պոլսի թաղերից, իսկ **60**-ը առաջնորդանիստ գավառներից: Բացի ներկայացուցական սկզբունքից, Սահմանադրության մեջ ամրագրված է նաև **անդամակցության սկզբունքը**, որի համաձայն՝ երեսփոխաններին կարող են անդամակցել Կրոնական ու Քաղաքական ժողովների, Տեսուչ խորհուրդների անդամները, Թաղական խորհուրդների ատենապետները, ազգային և Օսմանյան պետության հայ պաշտոնյաները, եկեղեցական դասի ներկայացուցիչներ (Եպիսկոպոսներ, վարդապետներ, ավագերեցներ), մտավորականներ (մատենագիրներ, բժիշկներ, ուսուցիչներ, խմբագիրներ, թարգմանիչներ), գինվորականներ: Թեև սկզբում անդամակիցների թիվը սահմանվել էր մինչև 100 անձ, բայց անդամակիցներ դարձան շատերը, և որոշվեց, որ Ընդհանուր ժողովը «...400-էն աւելի անդամ չպիտի ունենայ», քանի որ երեսփոխանների մեծամասնության (գոնե 111 անդամի) բացակայության դեպքում նիստ չպետք է գումարվի⁵:

Հարկ է նշել, որ Սահմանադրության հեղինակներն անդամակցության սկզբունքը սահմանել էին՝ ենելով նշանավոր ու հեղինակություն ունեցող անձանց արժանիքներից: Նրանց նպատակը պառլամենտական գործընթացներին հնարավորինս շատ մտավորականների ընդգրկումն էր՝ **ապահովելու «ընտրեալ» ու կրթված մեծամասնություն**: Այս սկզբունքը համահունչ է Անտիկ շրջանի քաղաքական փիլիսոփաների այն հայեցակետին, ըստ որի՝ **պետությունը պետք է կառավարեն իմաստունները կամ լավագույնները**, ովքեր տիրապետում են կառավարման արվեստին և օժտված են առաջինություններով:

Այսուամենայնիվ՝ անդամակցության սկզբունքը բավական անհարմարություններ ստեղծեց Ազգային ժողովի տարբեր գործընթացներում, մանավանդ որ՝ զավաներում բավական բարդ էր

⁴ Ազգային Սահմանադրութիւն Հայոց.- Կ.Պոլս, 1860, հոդ. 1, էջ 10:

⁵ Տե՛ս սույն տեղում, հոդ. 10, էջ 16:

ընտրությունների կազմակերպումը, և հավանական չեր նախատեսված թվաքանակով մտավորականների անդամակցությունը: Ընդ որում՝ անդամակիցներին ժողովուրդը չեր ընտրում, ինչը հակասում էր ժողովրդավարական ընտրակարգին: Այդպիսով՝ որքան ել արդարացված լինեին ազգային գործիչների նպատակները, Սահմանադրության 10-րդ հոդվածը չեր համապատասխանում սահմանադրական բուն սկզբունքներին, և, ի վերջո, այն հայտարարվեց վերաբննելի ու հետազոյում բարեփոխվեց:

Ա. Ալպոյաճյանի հաստատմամբ՝ 1863թ. Սահմանադրության մեջ «...Ազգային ժողովին կազմութիւնը աւելի բանառը հիման մը վրայ ձեւուած էր, թէս դարձեալ կատարելապէս արդարութեան վրայ հիմնուած չեր: Բացարձակ արդարութեան վրայ հիմնուած ըլլալու համար ոչ ընտրողութեան և ոչ ընտրելիութեան համար եկեղեցական և աշխարհական դասակարգերու միջն պէտք չեր որ որեւէ խտիր գոյութիւն ունենար, պէտք էր որ Ընդի. Ժողովի մեջ, Կ.Պոլիսն ալ բացառութիւն չըլլալով, ամէս զաւառ իր բնակչութեան թույն համաձայն իր ներկայացուցիչը ունենար»⁶: Ալպոյաճյանի առաջադրած սկզբունքները Սահմանադրության երկու տարբերակում ել չեն արտացոլվել: Բայց սահմանադրականները բացառում էին դասային որևէ խստրություն: **եղանոր և աշխարհիկ դասերի ներկայացուցիչները Ազգային ժաղովում հավասարապէս համարվում են ազգի ներկայացուցիչ՝ կատարելով իրենց ուրույն գործառույթները:**

Ինչ վերաբերում է Ազգային ժողովում Կ.Պոլիսի և զավառների ներկայացուցիչների անհամաշափությանը, այն տոկոսային հարաբերությամբ որոշակիորեն մեղմացել է 1863թ. Սահմանադրության մեջ: Ըստ բարեփոխված հոդվածի՝ Ազգային ժողովը բաղկացած է 140 երեսփոխանից, որից 20-ը (1/7 մասը) եկեղեցական է, 40-ը (2/7 մասը) ընտրվում է զավառներից, 80-ը (4/7 մասը)՝ Կ.Պոլիսի թաղերից⁷: Եթէ նախկինում Ազգային ժողովի 220 երեսփոխանից միայն 60-ն էր ներկայացնում զավառացիներին, ապա վերափոխված տարբերակում 140 երեսփոխանից 40-ն է ընտրվում զավառներից: Այսինքն՝ 1863-ի

⁶ Ալպոյաճեան Ա. Ազգային Սահմանադրութիւնը իր ծագումը և կիրառութիւնը // Ըստարձակ Օրացոյց Ս.Փրկչեան Ազգային Հիւանդանոցի Հայոց- Կ.Պոլիս, 1910, էջ 416-417:

⁷ Տե՛ս Ազգային Սահմանադրութիւն Հայոց- Կ.Պոլիս, 1863, հօդ. 57: Քանի որ Արևմտահայաստանում մինչև 1915թ. գործել է 1863թ. վավերացված Սահմանադրությունը, հողվածները կմնանարանվեն դրա հիման վրա:

Սահմանադրության մեջ Կ.Պոլսի և զավառների ներկայացուցիչների տարբերությունը 20-ով պակաս է 1860թ. Սահմանադրության մեջ սահմանված ցուցանիշներից:

Ազգային ժողովի նիստերին կարող են մասնակցել գործադիր իշխանության՝ Կրոնական ու Քաղաքական ժողովների անդամները, բայց եթե նրանք ընտրված չեն որպես երեսփոխան, ժողովում քվեարկելու իրավունք չունեն⁸: Ըստ օրենքի՝ Ազգային ժողովի նիստերը պետք է գումարվեն միայն Երեսփոխանների մեծագույն մասի (առնվազն 71 հոգու) ներկայությամբ⁹: Այս հարցը ևս բազմից քննարկվել է Ազգային ժողովում, քանզի նիստերը հաճախ հետաձգվում էին բազում երեսփոխանների բացակայության պատճառով:

Ազգային Ընդհանուր ժողովի իրավասություններն են. «Պատրիարքը, Կաթողիկոսը և Ազգին զիսաւր պաշտօնատարները, և Կրօնական ու Քաղաքական ժողովոց անդամները ընտրել, Ազգային ժողովոց վարչութեանը հսկողութիւն ընել, սոյն ժողովներուն վերաբերեալ՝ բայց իրենց ձեռնհասութենէն վեր համարուած գործերը որոշել և վճռել, և Ազգային Սահմանադրութիւնը անխախտ պահել»¹⁰: Արևմտահայ պատրամենտարիզմը ենթադրում է ազգային բոլոր պաշտոնյաների ընտրություն օրենսդիր իշխանության կողմից: Հետևաբար՝ Ազգային ժողովի առջև պատասխանառու են վարչական մյուս բոլոր մարմինները: Ըստ ազգային վաղեմի սովորության՝ Ընդհանուր ժողովը գումարվում է երկու տարին մեկ անգամ, ապրիլի վերջին՝ հետևյալ նպատակներով.

- քննարկելու Ազգային Վարչության՝ գործադիր իշխանության երկամյա գործունեության վերաբերյալ Տեղեկագիրը,

- ընտրելու Կրօնական ու Քաղաքական ժողովների նոր անդամներին,

- հաշվարկելու և քննելու ֆինանսական («ելեմտական») պաշտոնյաների հավաքած և ծախսած գումարների ընդհանուր հաշիվը,

- որոշելու, թե հետազա երկու տարում Ազգային տուրքը ինչպես պետք է տնօրինել,

- մասնակցելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանը,
- ընտրելու Կ.Պոլսի և Երուսաղեմի պատրիարքներին,

⁸ Տե՛ս նոյն տեղում, հօդ. 58:

⁹ Տե՛ս նոյն տեղում, հօդ. 59:

¹⁰ Նոյն տեղում, հօդ. 60:

• լուծելու Կրոնական ու Քաղաքական ժողովների միջև վեճերը կամ Պատրիարքի ու ժողովների միջև անհամաձայնությունը: Նման դեպքերում հակադիր կողմերն Ընդհանուր ժողովում ունեն միայն խոսքի, բայց ոչ քեարկելու իրավունք:

- Վերաբննելու Ազգային Սահմանադրությունը:

- լուծելու այնպիսի խնդիրներ, որոնց վերաբերյալ «...որոշում տալը Ընդհանուր ժողովոյն կը վերաբերի»¹¹:

Ընդհանուր ժողովում Ազգային Վարչության անդամներն իրավասու են խոսել բոլոր խնդիրների մասին, սակայն «...տուրքի և ընտրութեան խնդիրներէն զատ՝ ուրիշ խնդիրներու մէջ չեն կրնար բուէ տալ»¹²: Բացի ընթացիկ նիստերից, Ազգային ժողովը կարող է արտահերթ գումարել Պատրիարքը՝ Կրոնական կամ Քաղաքական ժողովներից մեկի համաձայնությամբ, կամ Ընդհանուր ժողովի անդամների մեծագույն մասի խնդրանքով: Այսպիսի արտակարգ նիստեր գումարելու համար Պատրիարքարանը պարտավոր է Ընդհանուր ժողովի գումարման պատճառն իրագեկել Բ.Դուանը՝ «...անոր հաճութիւնը» ստանալու համար¹³:

Սահմանադրության մեջ առկա է **ազգային երեսփոխանների ընտրության հատուկ կարգ**: Ընդհանուր ժողովի եկեղեցական 20 անդամին ընտրում են Կ.Պոլսի բոլոր եկեղեցականները՝ «...զարտնի քուէարկութեամբ ու քուէից բացարձակ առաւելութեամբ»: Երեսփոխան կարող են ընտրվել թէ՝ եպիսկոպոսները, թէ՝ վարդապետները, թէ՝ քահանաները, բայց պետք է նրանց երեսուն տարին լրացած լինի, առնվազն 5 տարի առաջ ձեռնադրված լինեն, այլ վայրերում պաշտոն չունենան և «...ո՞ր և է դատաստանի տակ չը գտնուին»¹⁴: Եկեղեցական երեսփոխանների պաշտոնավարման ժամկետը 10 տարի է, բայց երկու տարին մեկ անգամ նրանց 1/5 մասը փոխվում է ընտրությամբ: Տասնամյա պաշտոնավարման ժամկետը լրանալուց հետո եկեղեցականները դարձյալ համարվում են վերընտրելի¹⁵:

Աշխարհիկ երեսփոխաններին ընտրելու իրավունքի եխմքը ազգային տուրքն ու անձնական արժանիքներն են: Ըստ

¹¹ Նույն տեղում, հօդ. 61:

¹² Նույնը, կետ Ա:

¹³ Տէ՛ ս նոյն տեղում, հօդ. 61- 62:

¹⁴ Նույն տեղում, հօդ. 63:

¹⁵ Տէ՛ ս նոյն տեղում, հօդ. 64:

Սահմանադրության՝ «Ազգային տուրքը ընտրողութեան իրաւունք տալու համար, պէտք է որ ընտրողը տարին գո՞նէ եօթանասուն ու հինգ դուրուց ընդհանուր տուրք վճարէ»: Անձնական արժանիքներով ընտրելու իրավունք ունեն «...Արքունի դիւնաներուն և Տէրութեան ուրիշ պաշտօններուն մէջ գտնուողները. վկայեալ բժիշկները. օգտակար գրքերու հեղինակները, դպրատանց ուսուցիչները, և ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած անձինք»¹⁶: Ընտրելու իրավունք ունեն 25 տարեկանը լրացած, օսմանյան տերության հպատակ բոլոր հայերը: **Ընտրելու իրավունքից գրկված են.**

1. Քրեական հանցագործները, ովքեր օսմանյան քրեական օրենսգրքով հայտարարված են «քաղաքականապէս մեռեալ»:

2. Ազգային-քաղաքական գործընթացներում ներառված այն անձինք, ովքեր բացահայտվել են հակազգային գործողություններ ծավալելիս կամ դատապարտված են Ազգային ժողովներից մեկի կողմից, «...որոց համար Ազգային գործերու մէջ չը գործածուիլը վճռուած ըլլայ դատող ժողովին կողմէն»:

3. Օսմանյան դատարանների կողմից «զգաստացուցիչ» պատիժ կրողները, որոնց պատժի պայմանաժամկետը դեռ լրացած չէ:

4. Հոգեկան հիվանդները՝ խելազարության պատճառով անգործունակ ճանաչվածները, «...որոց կատարելապէս առողջացեալ ըլլալը օրինատը կերպի հաստատուած չ'ըլլայ»¹⁷:

Ընտրվելու իրավունք ունեն 30 տարեկանը լրացած հայազգի և հայադավան այն անհատները, ովքեր Օսմանյան տերության հպատակ են, պետական օրենքներին իրազեկ, մասնակցում են ազգային գործերին և ընտրելու իրավունքից գրկված չեն՝ ըստ 67-րդ հոդվածի:

Սահմանադրության մէջ առկա է նաև **ընտրության եղանակը**: Կ.Պոլսից և գավառներից ընտրվող երեսփոխանների բաշխման ցուցակները կազմելու համար 2 տարին մեկ գումարվում է **Համայնքարեւորդ ժողով**' Քաղաքական, Կրոնական ժողովների և Տէսուշ Խորհուրդների առենապետների մասնակցությամբ: Պատրիարքական Դիվանադան ընդիանուր ազգահամարի հիման վրա որոշվում է ընտրվելիք երեսփոխանների թիվը: Կ.Պոլսի թաղերի համար հիմք է ընդունվում ընտրողների թիվը, իսկ գավառների համար՝ բնակչության թվաքանակը¹⁸:

¹⁶ Նույն տեղում, հօդ. 65:

¹⁷ Նույն տեղում, հօդ. 67:

¹⁸ Տէ ս նույն տեղում, հօդ. 69:

Երեսփոխանների պաշտոնավարման ժամկետը 10 տարի է, ուստի՝ երկու տարին մեկ անգամ նրանց 1/5 մասը փոխվում է, և երեսփոխանների կազմը վերանորոգվում է՝ ընտրվելով թե՝ Կ.Պոլսի թաղերից, թե՝ զավառներից: Այս կարգն առաջին ութ տարվա ընթացքում պետք է կատարվի **վիճակահանությամբ**¹⁹, այն պայմանով, որ «...եթե թաղի մը ընտրողները և կամ զաւարի մը բնակչաց թիւը աւելցած կամ պակսած է, այն թաղին կամ զաւարին տալու Երեսփոխանաց թիւն ալ համեմատութեամբ պիտի աւելնայ կամ պակսի»²⁰: Վախճանված կամ հրաժարված երեսփոխանների փոխարեն ընտրվում են նոր անձինք:

Թաղային երեսփոխաններին ընտրում են Կ.Պոլսի թաղերի բնակիչները, իսկ **զավառական** երեսփոխաններին՝ յուրաքանչյուր զավարի Ընդհանուր ժողովը: Հստ ազգային ընտրակարգի՝ պարտադիր չե, որ երեսփոխանները «...ընտրող թաղին կամ զաւարին բնակիչներէն ըլլան. բաւական է որ Կ.Պօլսոյ մէջ բնակին, իրենց ներկայացուցած թաղին կամ զաւարին ազգային գործոցը հմուտ ըլլան, և **ազգասիրութեամբ, ուղղութեամբ և արդարախոհութեամբ, ընտրազաց յարգն ու համարումը ստացած անձինք ըլլան** (ընդգծումը.- Լ.Ս.)»²¹: Սահմանադրության մէջ ամրագրված է շատ կարևոր մի սկզբունք: Խոսքը **համազգային ներկայացուցչության** մասին է. «Ազգային Երեսփոխանները ո՛չ թէ զիրենք ընտրող թաղին կամ զաւարին Երեսփոխանները կը համարուին Ընդհանուր ժողովոյ մէջ, այլ **Ազգին Երեսփոխաններն են՝ համազօր իշխանութեամբ**»²²:

Այդպիսով, ելնելով ազգային միասնության, ազգային շահերի գերակայության սկզբունքից՝ **սահմանադրականները բացառում են որևէ թաղի կամ զավարի շահերի գերակայություն կամ ստորադատում:** Եթե խնդիր է ծագում թաղերից կամ զավառներից մեկում, այն՝ որպես ազգային խնդիր դառնում է ազգի **բռլոր** երեսփոխանների հոգածության առարկան: Հ. Խաչատրյանը և Գ. Սաֆարյանը այս փաստի առնչությամբ նշում են. «Ազգային Սահմանադրությունը ամրագրել է պատգամավորի ազատ ներկայացուցական մանդատի կարգավիճակը՝ Ազգային ժողովում որպես ազգի համընդհանուր շահերը ներկայացնողի, և

¹⁹ Նոյն տեղում:

²⁰ Նոյն տեղում, հօդ. 70:

²¹ Նոյն տեղում:

բոլորովին կաշկանդված չէ իր ընտրական կորպուսից»²²: Կարծում ենք՝ Ազգային սահմանադրությունը լիովին բացահայում է «ազգային երեսփոխան» հասկացության իմաստն ու բռվանդակությունը:

Քվեարկության կարգը. ընտրությունները տեղի էին ունենում ընթիանոր, հավասար և ուղղակի սկզբունքներով: Հստ Սահմանադրության՝ «Քվեարկութիւնը գաղտնի է. ուստի պետք է որ քուեարկուք առանձին գրեն իրենց քուերուղբը, որպես զի ուրիշ մը չը կրնայ տեսնել գրած անունները»²³, այն պետք է ավարտվի մեկ օրում: Նշված օրը չքեարկած ընտրողներն այլևս չեն կարող իրենց քվեն ներկայացնել և բողոքելու իրավունք չունեն: Որեւ մեկն իրավազոր չէ քվեարկել երկու թաղում: Քվեարկության ավարտից հետո քվեատուփերը բացվում են Թաղական խորհրդի առջև, և հատուկ ընմիջները հաշվում են քվեները՝ դրանք համեմատելով քվեարկողների թվի հետ: Եթե տարբերություն է նկատվում, կամ Թաղական խորհրդը խարդախության կասկած է հայտնում, վերաքեարկություն է նշանակվում (տես՝ հոդ. 77): Ակնհայտ է՝ օրինականության պահպանումը գերակա սկզբունք է, որը խախտել անհնար է:

Սահմանված է **մեծամատնական ընտրական համակարգ** Քվեարկողների թվի կեսից ավելի ձայն ստացողների միջից առավելագույն քվե ստացողները համարվում են ընտրված երեսփոխաններ: Իսկ եթե երկու անձ ստանում է հավասար քվեներ, նրանցից տարիքով ավագն է ընտրվում: Եթե առաջին անգամ քվեարկելիս ձայների առավելություն չի ստացվում, Թաղական խորհրդը ծանուցում է «...առաւելագոյն քուէ ստացող երկու անձանց անունները. և երկրորդ քուեարկութիւնը օրինատրապես այն երկու անուանց վրայ կ'ըլլայ»²⁴: Ի վերջո՝ ընտրվում է առավել շատ քվե ստացողը:

Ծնորությունների վավերացման կարգը. ընտրություններից հետո յուրաքանչյուր թաղական խորհրդը իր թաղից ընտրված երեսփոխանների անուններն ու ընտրությունների ընթացքը հատուկ տեղեկագրով ներկայացնում է Պատրիարքին: Տեղեկագրերում պետք է նշված լինեն ընտրվողների անունը, ազգանունը, բնակության վայրը,

²² Խաչատրյան Հ., Սաֆարյան Գ., Արևմտահայերի «Ազգային Սահմանադրությունը» և նրա պատմական և շահակությունը // Հայաստանի պետության և իրավունքի տեսության և պատմության հիմնահարցեր, Եր., 1998, էջ 14:

²³ Ազգային Սահմանադրությին Հայոց, 1863, հոդ. 73:

²⁴ Նույն տեղում, հոդ. 80:

գրադմունքը և քվեարկության բոլոր հանգամանքները: Պատրիարքը տեղեկագրերը փոխանցում է Քաղաքական ժողովին, որը «...զանոնք քննելով կ'ստուգէ Երեսփոխանաց ընտրելութեան պայմանները», ապա Պատրիարքը պաշտոնական ծանուցագրեր է ուղարկում ընտրված երեսփոխաններին՝ իրավիրելով մասնակցելու Ընդհանուր ժողովի ատյանի կազմմանը²⁵: Ընդհանուր ժողովն իր առաջին նիստում վերանայում է Քաղաքական ժողովի քննած տեղեկագրերը և «...Երեսփոխանաց իշխանութիւնը կը վաւերացունէ, որով Ընդհանուր ժողովը ըստ օրինի կազմուած կ'ըլլայ»²⁶: Եթե **Ա. Ազարի Երեսփոխանների մեծամասնությունը ընտրված լինի,** Ազգային ժողովը կարող է գումարվել՝ առանց սպասելու գավառական երեսփոխանների ընտրությունների ավարտին: Եթե որևէ մեկն ընտրված լինի մի քանի թաղի կամ գավառների կողմից, ինքը կարող է որոշել, թե ո՞ր թաղի կամ գավառի ներկայացուցիչն է ցանկանում լինել: Հակառակ դեպքում՝ հարցը քվեարկությամբ վճռվում է Ազգային ժողովում (տես՝ հոդ. 83):

Այդպիսով՝ Ազգային Ընդհանուր ժողովը բարձրագույն օրենսդիր մարմինն է և որպես ազգի ներկայացուցական մարմին՝ ունի գերագույն հեղինակություն և իրավագործություն ազգային վարչակառավարման համակարգում: Հետևաբար՝ գործադիր իշխանության մարմինները, Օժանդակ խորհուրդներն ու հոգարածությունները պատասխանատու են Ազգային ժողովի առջև: Վերջինս քաղաքական ու բարոյական պատասխանատվություն ունի միայն **ազգի՝** որպես **ազգային իշխանության առբարերի և գերազույն սուլթեկտի** առջև:

Օրենսդիր իշխանության՝ Ազգային Ընդհանուր ժողովի կազմակորման վերոհիշյալ սահմանադրույթները բխում են **Խորհրդարանական կառավարման եիմնակցունքներից**, որոնք համահունչ են արևմտյան դասական պառլամենտարիզմի ոգուն: Ընդ որում՝ հարկ է նշել, որ ազգային սահմանադրականությունը որոշ սկզբունքներով առաջադիմական էր տվյալ պատմաշրջանի եվրոպական սահմանադրական գաղափարակարգից: Հայ գործիչներն առավել կարևորում են պառլամենտարիզմի հետևյալ սկզբունքները.

● **Ներկայացուցական սկզբունք.** ըստ Սահմանադրության՝ «Կարչութիւնը՝ ազգային ըլլալու համար, պէտք է **Երեսփոխանական**

²⁵ Տե՛ս նույն տեղում, հոդ. 81:

²⁶ Նույն տեղում, հոդ. 82:

ըլլայ»²⁷: Հոշակելով ժողովրդի ազատ ընտրելու իրավունքը՝ որպես ազգային-սահմանադրական իրավունք, **օրինական** են համարվում **միայն քվեարկությամբ ընտրված ու Ազգային ժողովում վավերացված պաշտոնները**. Ըստ Ս. Օրմանյանի՝ «...լաւագոյն է անսալ ձայնին Աստուծոյ, որ երբեմն կը յայտնուի ի ձայնի ժողովրդեան և երբեմն ձայնի մեծաւորաց, բայց ապահովագոյն ևս երբ երկու ձայները կը ձայնակցին»²⁸: Իր ներկայացուցիչներով ազգն իրականացնում է օրենսդրական, վերահսկիչ ու հաշվառության գործառույթներ: Երեսփոխանի անձեռնմխելիության իրավունքն անօտարելի է, ինչը նա փոխհատուցում է բուն սահմանադրական գործունեությամբ: Ազգի ներկայացուցիչը պետք է. ա) ճանաչի իր պաշտոնի եռությունն ու պատասխանատվությունը, բ) նախաձեռնություն դրսորի ոչ միայն օրինաստեղծման, այլև իրավաստեղծման տրամաբանությամբ, գ) շղառնա պաշտոնի կրավորական սուբյեկտ, այլ հանդես գա ազգօգուտ առաջարկներով՝ նախապես կշրադատելով դրանց նպատակահարմարությունը տվյալ ժամանակաշրջանում, դ) նպաստի հայկական զավառների սահմանադրականացման գործընթացին՝ չեզոքացնելով օսմանյան ինքնակալական վարչարարության աղետալի հետևանքները:

● **Ազգային կառավարության վարչական իրավագործությունը բիում է անհատների իրավունքներից:** Ռ. Պերպերյանի կարծիքով՝ նոր քաղաքակրթությունների արժեվորման չափանիշը անհատին տրված ազատության չափն է, և «Կառավարութեան պաշտօնն է հսկել որ իրաքանչյուր... վայելէ իւր իրաւունքները... իւր ազատութիւնն, ինչ որ կ'ենթադրէ որ ոչ որ բոնաբարէ այլոց ազատութիւնն»²⁹: Սակայն ազգային սահմանադրականությամբ՝ անհատներն անմիջականորեն չեն ներկայացնում իրենց իրավունքները. նրանք ուղղակի ներկայանում են քաղական ժողովներով, քաղերը՝ զավառական ժողովներով, վերջիններն էլ ընտրում են Ազգային ժողովի երեսփոխաններին, ովքեր անսիրականորեն ներկայացնում են ողջ ազգին, իսկ միջնորդավորված՝ նաև անհատներին: Ազգային պատգամավորների իրավագործությունն ավելի բարձր է, քանզի նրանց ընտրողներն էլ ընտրված են ժողովրդի ձայնով, և իրենք «ընտրյալների ընտրյալն են»: Հարկ է նշել, որ այս

²⁷ Նույն տեղում, Հիմնական սկզբունքը, կետ Ե, էջ 12:

²⁸ Բանախօսութիւն Գեր. Տ. Օրմանեանի // Սասիս, Կ. Պօլիս, 1880, թիւ 2695:

²⁹ Պերպերյան Ռ., Համառօտ քաղաքական տնտեսութիւն, Վ. Պօլիս, 1883, էջ 83:

ընտրակարգն արտացոլում է սահմանադրական քաղաքականության ազգային միտումը՝ օսմանյան կայսրության ողջ տարածքում ընտրական իրավունքի գործադրմամբ ձևավորել արևմտահայոց միասնական իրավական կեցություն՝ որպես ազգի ապագա քաղաքական միասնականացման հիմք³⁰:

Այս համատերսում կարեռվում են ընտրվողների համար Սահմանադրությամբ պահանջվող արժանիքները, հատկապես՝ ազգային-քաղաքական կյանքում երանց ունեցած դերն ու պատասխանատվության չափը: Օրմանյանի դիտարկմամբ՝ ազգի կառավարիչները պետք է գիտակցեն հետևյալ ճշմարտությունը. «Ընտրողութեան իրաւունք. ամէնէն մեծ իրաւունքը՝ որով որ ազգային պաշտօնավարութեանց կը կոչէ այն անձը՝ որոյ սկզբունք, գաղափարը, ձիրք, արդիւնք և բարոյական յատկութիւնը ոչ միայն զինքն արժանի կ'ընեն բացարձակաբար, այլ և զինքն յարմար դատել կու տան ժամանակին և հարկին պարագային համեմատ»: Իսկ ընտրողները պետք է գործադրեն իրենց ապագա ներկայացուցիչներին վերահսկելու իրավունքը, որ «...ակնառութիւն և ծառայամտութիւն և մասնաւոր շահեր հետի մեան բուկտուիկերեն. միայն արժանիքը և հասարակային օգուտը որոշէ ընտրելիները»³¹: Այսինքն՝ յուրաքանչյուրը պետք է գրադրվի իր գործով, ինչը ենթադրում է պաշտօնի եռթյան իմացություն, իրավունքների ու պարտականությունների ճշգրիտ կատարում և գործունեության այլ ոլորտներում անհարկի միջամտության բացառում:

• *Սահմանադրական-խորհրդակցական սկզբունքի պարտադիր կիրառում.* որևէ պաշտոնյա չի կարող կամայականությամբ կառավարել, բայց պետք է պահպանի անհատական ինքնությունը: Նույնիսկ ազգային ծանրագույն խնդիրները, որոնց առավել իրազեկ է ազգապետ-պատրիարքը, պետք է Ազգային ժողովում ենթարկվեն սահմանադրական բննարկման: Ըստ որում՝ եայ պատրիարքների մեծ մասը միշտ ունեցել է աշխարհիկ խորհրդականներ, ովքեր քաղաքական գործունեություն են ծավալել չիրապարակվող ազգային խնդիրների լուծման ժամանակ: Թեև խորհրդակցական մարմնի պաշտոնը սահմանված չէ Սահմանադրության մեջ, սակայն Ըստիանուր,

³⁰ Տե՛ս Սարվազյան Լ. Մարդու իրավունքների խնդիրը արևմտահայ սահմանադրական գաղտնաբառախոսության մեջ // Մարդու իրավունքների և ժողովրդակարության հիմնահարցեր (Հոդվածների ժողովածու). Եր., Լիեզվա, 2004, էջ 45:

³¹ Օրմանեան Մ., Հայ երիտասարդություն (Բանահառություն). Կ.Պոլիս, 1880, էջ 51-52:

Քաղաքական ու Կրոնական ժողովների անդամները համարվել են պատրիարքի գործակից-խորիրդասուներ:

● **Ազգային շահերի ու բարեկեցության գերակայություն՝ անհատական շահերի նկատմամբ.** ազգային վարչության գործունեությունը հիմնված է ազգի գերիշխանության ու սահմանադրական օրենքների գերակայության սկզբունքների վրա: Ուստի՝ անձնական սկզբունքները պետք է ստորադասվեն պաշտոնական պահանջներին և ազգային-քաղաքական ընդունված կողմնորոշումներին: Ս. Օրմանյանի դիտարկմամբ՝ «...պաշտօնի վրայ անձնական ուղղությունները չեն՝ որ պիտի տիրեն, այլ պաշտօնի կոչումը... եթե մեկը պաշտօնի մը կը կոչուի, միանգամայն անոր առջեւը կը գծուի պաշտօնական ուղղութիւնը»³²: Ընտրված պաշտոնից անհարկի հրաժարվելը սահմանադրությունը ընդունելի չէ: Ազգապետի քաղաքական հրաժարականը պետք է լինի հիմնավորված՝ հանուն ազգային անվտանգության ու շահերի:

● **Սոցիալական ներդաշնակության ապահովում.** հայ հանրությունը միատարք չէ, այն ներկայացնում էին տարբեր խավեր՝ օժտված սոցիալական որոշակի իրավունքներով ու գործառույթներով: Բայց սահմանադրական օրենքի ուժը տարածվում էր ազգի բոլոր անդամների վրա՝ անկախ դասային, գույքային, սեռային և այլ տարբերություններից: Բնական օրենքը ևս մարդկանց որևէ խմբի չի ազատում պարտականություններից: **օրենքի աշխե բոլորը եավասար են:** Սահմանադրության մեջ սահմանված են ոչ թե դասերի, այլ ազգի ու երա անդամների, ժողովրդի և իշխանության իրավունքները: Հետևաբար՝ դասային արտոնությունները բացառվում են. «Սահմանադրութիւնը... Ազգին մեջ ընտրօղներ եւ ընտրելիներ միայն կը տեսնէ եւ երբէ ք դասեր...»³³: Սահմանադրականներն առհասարակ մերժում էին դասային խորականությունն ու դասակարգային պայքարի գաղափարը, քանի առաջնային էին համարում ազգությունը և համազգային հիմնահարցերը:

● **Աշխարհիկ և եղոգնոր իշխանությունների իրավահավասարություն և համագործակցություն.** Ազգային ժողովում

³² Օրմանեան Ս., Ցիշատակագիրը Երկուտասանամեայ Պատրիարքութեան, Պրակ 1. Կ.Պոլիս, 1910, էջ 22:

³³ Առենազգութիւնը Երեսփոխանական Ըստիանուր Ժողովոյ, Կ.Պոլիս, 1870, էջ 21:

աշխարհիկ ու եկեղեցական պատգամավորներն ունեն հավասար իրավազորություն: Եկեղեցականների ընտրելիությունը պայմանավորված է կրոնական մասնավոր խնդիրներում առավել իրազեկության հանգամանքով: Եթե նրանք պաշտպանեին միայն հոգևոր դասի իրավունքները, ապա եկեղեցական խնդիրներից զատ, ազգային-քաղաքական խնդիրների քվեարկությանը ձայն չեն ունենա: Համանմանորեն՝ աշխարհականները ձայն չեն ունենա եկեղեցական խնդիրների քվեարկության ժամանակ: Դրա հետևանքը կլիներ Ազգային ժողովի՝ ազգային իշխանության գերագույն մարմնի երկատումը, և այն կդառնար «...էակ մը... երկամարմին՝ կոնակ կոնկի փակած՝ որ ո՛չ առաջ եւ ո՛չ ետ կրնայ շարժիլ»: Պաղամենտարիզմի սկզբունքով հոգևոր պաշտոնյանները վայելում են աշխարհականների հարգանքը, բայց իբրև ազգի անդամներ՝ նրանց հետ համահավասար պետք է խոնարհվեն արդարության սկզբունքի և օրինականության առջև: Հետևաբար՝ Ազգային գերագույն մարմնի բոլոր անդամները «...հաւասարապես զԱզգը կը ներկայացնեն եւ համազօր իշխանութեամբ որոշողական ձայն ունին ազգային ամէն խնդրոց մեջ»³⁴:

• Ժողովրդի և իշխանության սահմանադրական հարաբերակցություն. ողջ հայությունը ազգային իրավունքի սուբյեկտն է և ազգային իշխանության հոգածության օբյեկտը: Այն, ինչ իշխանության իրավունքն է, ժողովրդի պարտականությունն է, և ժողովրդի իրավունքը՝ իշխանության պարտականությունը: Ն.Ռուսինյանի հաստատմամբ՝ Սահմանադրությունը «...ազգային անհատներու իրարու հետ ունեցած ազգային յարաբերութեանց մէջ իրաքանչյուրին իրաւունքն ու պարտքը կը կանոնաւորէ մէկ կողմէն, եւ միւս կողմէն՝ զԱզգն ու զազգային Վարչութիւնը փոխադարձ պարտեօք, կը կապէ իրարու հետ»³⁵: Մերժվում է թէ՝ ժողովրդի, թէ՝ կառավարողների անօրինականությունը, դատապարտվում են և՝ բոնատիրությունը, և՝ կեղծ ժողովրդավարությունը, քանզի, ի վերջո, երկուսն էլ հանգում են անիշխանության: Ըստ մտածողի՝ երբ իշխանությունն է պարտազանց, կորցնում է իր ընդհանրական՝ Վարչական իրավունքը և «...բարոյապես ինք լուծեալ եւ կործանեալ կը

³⁴ Նոյն տեղում, էջ 22:

³⁵ Ռուսինեան Ն., Ազգային հանգանակութիւն. Վ. Պօլիս. (ա.թ.), էջ 25:

համարուի առաջի իրաւանց եւ օրինաց³⁶: Իսկ երբ ժողովուրդն է պարտազանց, կորցնում է սահմանադրական իրավունքները:

Ժողովուրդն իրավունք ունի գնահատել պատշաճենուի գործունեությունը՝ որոշելով դրա օրինականությունն ու արդարացիությունը: Բայց ժողովուրդը պետք է ճանաչի ազգային իշխանության իրավունքները՝ հնագանդվելով օրենքներին: Ավելին, ըստ Ս. Խրիմյանի՝ նա պետք է իրագեկ լինի նաև տիրող պետության օրենքներին, որ «...օրինավարներ ժողովուրդի անզիտութեան... համար չը համարձակին նոյն իսկ օրենքով հարստահարել»³⁷: Գր. Օտյանը հիշեցնում է ներկայացուցական սկզբունքը, որ **ժողովուրդը վստահեկով է ընտրում իր ազգի պաշտոնյաներին՝** գիտակցելով, որ «...ինքինքը կառավարելու իրաւունքը ինք աղեկ պիտի չը կրնայ գործածել... զիտցողներու կը յանձնեմ»³⁸: Հետեաբար՝ ժողովուրդն իրավունք չունի անհարկի միջամտել իշխանության գործունեությանը՝ երաշխավորելով նրա գործելու ազտությունը: Սահմանադրական կարգը հաստատվում է հանուն **ազատության**, ինչը ենթադրում է նաև **սահմանադրական պատասխանատվություն**: Ըստ Ն. Վարժապետյանի՝ ազգը պարտավոր է պաշտպանել սեփական իշխանության հետինակությունն ու պատիվը, հակառակ դեպքում՝ «...օտարներէն զնոյն պահանջելու իրաւունքնիս կը կորունցունեմք. ներքնապէս միութեամբ գօրանամք՝ արտաքրուստ պատկառելի եւ հզօր կրլամք»³⁹: Ըստուներով ավագ քաղաքագետների դատողությունները՝ Օրմանյանը կարևորում է նաև **ժողովրդի ներուժի ճիշտ ուղղորդումը՝ ազգային հեռապատկերն իրքն մտաժիպար ունենալով**, քանզի «Ազգայնութեան և ազգային դրից առաջին տարրը՝ այն ուժով և հաստատութեամբ իւր կամաց մէջ զգալն է»⁴⁰:

Սահմանադրականներն ազգի փոխանորդներին անվանում են **ժողովրդի քնական փաստաբաններ**, որոնց գերազուն պաշտոնը ազգային իրավունքների պաշտպանությունն է, հատկապես՝ աշխարհաքաղաքական հարափոխոլու պայմաններում: Նրանց համոզմամբ՝ ազգային իրավունքները ոչ մի պարագայում չպետք է զիհաբերվեն քաղաքական նկատառումներին՝ ազգային ոգին անխոցելի

³⁶ Ատենագրութիւնը Երեսփոխանական Ըստանուր Ժողովի 1870-74 ևստաշրջանի, էջ 84:

³⁷ Խրիմյան Հայրիկ, Միքար եւ Սամուել (Բարի հօր կրթական դասեր), Ամբողջական երկեր, Նիւ Եռքը, 1929, էջ 437:

³⁸ Օտեան Գր., Ազգային Սահմանադրութիւն ու Սէճմուա.- Կ.Պոլիս, 1861, էջ 4-5:

³⁹ Ատենագրութիւնը Երեսփոխանական Ըստանուր Ժողովի, 1870-74 ևստաշրջանի, էջ 6:

⁴⁰ Օրմանեան Ս., Հայ Երիտասարդութիւն, էջ 44:

ու անթափանց պահելով արտաքին վտանգավոր ազդեցություններից: Նման իրավիճակներում Գր. Օսյանի խորհուրդն է. «... սպասել մինչեւ որ ժամանակը գայ, եւ գործել երբ հասնի ժամանակը, այս է... իմ սկզբունքս քաղաքականութեան»⁴¹: Չաետք է ժողովրդին դրդել չնախապատրաստված ու կասկածելի իւսուանքներով պայքարի:

• **Կենտրոնացված և ապակենտրոն կառավարման սկզբունքների համաշխափություն.** հայ ավանդական քաղաքականությանը բնորոշ է երկու միտում. մի կողմից կենտրոնացված իշխանության ամրապնդում, մյուս կողմից՝ տեղական ինքնավարությունների պաշտպանություն⁴²: Օրմանյանի հայեցակետով՝ «Երբոր դժուարին են ժամանակը, օգտակար է իշխանութեան չորս կողմը ամփոփուելով, մի և միացեալ միութիւն մը կազմել, և անով ամեն կերպ դժուարութեանց դեմ մաքաղիլ»⁴³: Բնականաբար՝ քաղաքական բարդ իրավիճակում է արդարացվում է կենտրոնացված կառավարումը, և մեծանում է կենտրոնական ազգային վարչության դերը, «...վասն զի նա է որ բոլոր ազգին անհատները կը միացնէ իբր բնական և օրինական գլուխ Հայ ազգութեան»⁴⁴: Այնուամենայնիվ՝ նոյնիսկ այս պարագայում ճիշտ չէ անհատական գործունեության արգելումը կրթության, բարեգործության, տնտեսության, մշակույթի ոլորտներում, հակառակ՝ անհրաժեշտ է օժանդակել ժողովրդի նախաձեռնությանը. «...պէտք է որ ամենայն ինչ որ յազգին է, ազգային կենրոնին հսկողութենէն շվյափի, որպէս զի ազգային մարմնոյն վրայ իբր անյարիր ինչ բոլորովին օտար և բաժանեալ չմնայ»⁴⁵:

XIX դարում ապակենտրոն կառավարման սկզբունքը դարձավ սահմանադրական հիմնազարդարներից մեկը: Եթե ներազգային հարաբերություններում կարևոր էր ազգային ներուժի կենտրոնացումն ազգային իշխանության շուրջ, ապա հպատակության կարգավիճակում անհրաժեշտ էր ապակենտրոն ազգային ինքնակառավարումը: Սահմանադրության ընդունումն ու գործադրությունը այս սկզբունքի

⁴¹ Գրիգոր Օսյանի Գոհարները, Հ. Բ., Կ.Պոլիս, 1931, էջ 145:

⁴² Այս խնդրի մասին տես Սարվազյան Լ., Կենտրոնացված և ապակենտրոն կառավարման սկզբունքների փաստարկությունները // Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա.- Եր., 2010, Թիվ 11, էջ 134-142:

⁴³ Օրմանյան Ս., Հայութեան հոգին (Բանախօսութիւն). Կ.Պոլիս, 1879, էջ 34:

⁴⁴ Օրմանյան Ս., Կարօս եմք (Բանախօսութիւն). Կ.Պոլիս, 1880, էջ 19:

⁴⁵ Նոյն տեղում, էջ 20:

ինքնատիպ դրսեորումն էր՝ որպես պետականության վերականգնման առաջին աստիճան:

• **Վիճաքանության, կարծիքի, համոզմունքի ազատությունները՝ որպես խորհրդարանական գործունեության էական պայմաններ.** ազգային խնդիրներն օրինավոր լուծում ստանում են միայն առողջ վիճաբանությամբ ու ազատ քննարկմամբ, որոնք շարունակվում են այնքան, մինչև ի հայտ է զալիս լուծման սահմանադրական եղանակը, ծնվում են նոր գաղափարներ, բացահայտվում ճշմարտություններ և հերթվում կեղծիքներ: Սահմանադրականության սկզբունքով՝ **խսոր ազատությունն իմաստավորվում է առաջադրված նպատակի օգտակարությամբ** ոչ թե այն անհատի կամ խմբի համար, ով ներկայացրել է այն, այլ ողջ ազգի: Ըստ Ն. Վարժապետյանի՝ «... բոլոր եսութիւնները միակ Ես-ին, այսինքն՝ ազգին վրայ միանալու են, սիրոյ շրջանակին մէջ ամեն մարդ մէծ եւ միանգամայն պատիկ է»⁴⁶:

Հայ մտածողներն ազատ մատուց համարում են ազգային հիմնահարցերը լուսաբանելու, սահմանադրական սկզբունքների կիրառությունը վերահսկելու միջոց: Բայց կան այնպիսի խնդիրներ, որոնց բռնատիրության պայմաններում ստիպված են մոտենալ «երկյուղած» ձեռքով: Դրանք հարկ է քննարկել ազգային-պաշտոնական շրջանակներում, պաշտոնական թղթակիցների ներկայությամբ, որ նրանք «... սխալ տեղեկութիւն ստանալով, չը մոլորեցունեն հանրային կարծիքն, խարիսխ Սահմանադրութեան»⁴⁷: Սահմանադրության գործադրման առաջին խոկ ամսաներին Ազգային ժողովում առաջարկվում է ստեղծել ազգային մատուցի ազատություններն ու իրավունքները երաշխավորող կանոնադրություն, ինչպես նաև ազգային պաշտոնական լրազիր (այն դարձավ Կ.Պոլսի «Մասիս» պարբերականը):

Պաշտոնական լրազիրի գոյությունն իմաստավորվում էր ոչ միայն ներազգային շրջանակներում, այլև կայսրության սահմաններում ու դրանցից դուրս՝ ազգային ու քաղաքացիական իրավունքները հրապարակայնորեն հրչակելու, ազգային խնդիրներն ու նպատակները ազգի անունից պաշտոնապես հայտարարելու, օսմանյան տերությանն առնչվող խնդիրների լուծումներն ազգի անունից պահանջելու, օտար մամուլում ազգի վերաբերյալ կեղծիքները հերքելու համար: Ազգային

⁴⁶ Ատենազրութիւնը Երեսփոխանական Ըստիանուր Ժողովոյ 1870-74 նստաշրջանի, էջ 6:

⁴⁷ Ատենազրութիւնը Երեսփոխանական Ըստիանուր Ժողովոյ 1883-1884 նստաշրջանի.- Կ.Պոլս, 1884, էջ 518:

խորհրդարանն ունի նաև **կայսերական իրամանագրերը քննարկելու իրավունքը**: Եթե իրամանները հայանպատ չեն, ազգն իրավազոր է դրանք չկատարել՝ պատասխան-բողոք հղելով ազգի անունից:

Ն. Ռուսինյանը մեկնաբանում է **ազգային իշտերդարանի բեմական ազատության սահմանները**: Խորհրդարանի բեմը նա համարում է «ազգային այն բարձր իրավարակը», որտեղից խոսվում է ազգի ու աշխարհի հետ: Ընդ որում՝ հնչած յուրաքանչյուր խոր ենթակա է ազգի և օտարների դասին: Հետևաբար՝ այս բեմից պետք է ներկայացվեն միայն **լավ կշռադատված ինդիքներ**: Ու քանի որ հայոց բեմական ազատության սահմանը ներազգային կյանքն է, ապա, ըստ Ռ. Պերպերյանի՝ ամեն ինչ պետք խոսվի «...յանուն ծշմարտութեան, յանուն Արդարութեան, յանուն Եղբայրութեան, յանուն Հայրենեաց եւ Աստուծոյ»⁴⁸: Բայց անօտարելի է **եղանակիվում ազգային երեսփոխանի անձեռնմխելիության իրավունքը**. Նրան հանիրավի գրպարտել, պատզամավորությունից գրկել, արտորել կամ սպանել՝ սահմանադրական սկզբունքի կոպիտ խախտում է: Եթե երեսփոխանը օրինախախտում է բույլ տակիս ազգային շրջանակում, նրան դատապարտելու իրավունքն ունի միայն ազգային իշխանությունը, իսկ եթե տերության դեմ է հանցանքը, նա պատժվում է օսմանյան օրենքներով:

Կարելի է եղրակացնել. Եթե բնական-աստվածային օրենքով սահմանված ազատությունը բացարձակ է, անստօրինելի, և այն իշեալ է մարդու համար ընդհաննրապես, ապա այդ ազատության դրսնորումները մարդկային կոնկրետ համակեցության մեջ՝ ազգային կեցության շրջանակներում ունեն պարտադիր սահմաններ, որոնց խախտումը վտանգում է նույնիսկ բույլատրված ազատությունը: Սահմանադրական գաղափարախոսությամբ՝ հարկ է ճանաչել այդ սահմանները, չառաջարել առկա պայմաններում անլուծելի խնդիրներ:

Սահմանադրականները հոչակեցին **ազգային իշխանության մարմինների գործունեությունը քննարկելու և քննադատելու ժարգության իրավունքը**. «Ժողովուրդը գիտէ զիշխանութիւն յարգել, գիտէ Վարչութիւն պատուել, բայց զանցառութեանց դեմ ալ չի կրնար լուել, եւ չլոելէն զատ գիտէ նաեւ չը ճանչնալ այն Վարչութիւնը որ չի պաշտպանէր իւր իրաւունքը եւ արդարութիւնը»⁴⁹: Սակայն քննադատությունը պետք է հիմնավորված և օրինական լինի՝ պահպանելով բարեկրթության

⁴⁸ Պերպերեան Ռ., Պերճախօսութիւն // Դպրոց եւ դպրութիւն. Վիեննա, 1907, էջ 329:

⁴⁹ Ատենազրութիւնը Ազգային ժողովոյ 1860-1870 նատաշրջանի, էջ 333:

կանոնները: Ժողովուրդն ունի նաև **հանրագրերով ինչիք կամ բողոքազիր ներկայացնելու իրավունք**՝ չթելարդելով դրա լուծման եղանակները, ինչի իրավագրությունը պատկանում է ներկայացուցական մարմին՝ Ազգային ժողովին: Քանզի հանրագիր ներկայացնող ժողովուրդը որքան կ մեծարիվ լինի, չի ներկայացնում որչ ազգը:

Ըստունելով ժողովրդի ազատակամությունն ու ազատ խոսքի իրավունքը՝ հայ գործիչները զգուշացնում են հպատակ ժողովրդի կտրուկ ապստամբական միջոցներից՝ առաջնային համարելով **խաղաղ, ներդաշնակ հարաբերությունները իշխանության ու ժողովրդի միջև**: Բռնատիրության պայմաններում նաև չափազանց վտանգավոր է հարուցել Սահմանադրության գործադրությունը դադարեցնելու պատճառ, այլ անհրաժեշտ է օրինապահությամբ պաշտպանել սահմանադրական ձեռքբերումները, որ ազգային ինքնօրինության հենքն են: Ըստ որում՝ XIX դարակեսից ի վեր իշխանությունից ժողովրդական հանրագրերի հիմնական պահանջները եղել են Սահմանադրության գործադրումը, ազգին «անիշխանական վիճակի» չհասցնելը և նրա բարօրությունը. «Ազգը ձեզմէ ոչ այլ ինչ կ'սպասէ, եթէ ո՛չ **Սահմանադրութիւնը եվ անոր գործադրութիւնը**»⁵⁰, - նշված է հանրագրերից մեկում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ արևմտահայ իրականության մեջ **ազգի իրավունքների պաշտպանությունը** ենթադրում էր մի շարք ինտիրների լուծում: Հիմք ընդունելով «**իրավունք և պարտը**» հիմնասկզբունքը՝ սահմանադրականների գործունեությունը միտված էր ազգային կյանքը սահմանադրուեն կազմակերպելու, ազգի ինքնօրինությունը, ներքին անկախությունը պահպանելու նպատակին: Վերջինի իրականացմանը զուգընթաց, նրանք փորձում էին լրացնել առավել բարդ իննիր՝ հպատակ, բայց **ինքնօրեն ազգի** իրավունքների պաշտպանությունը կայսրության տարածքում: Այս մակարդակում հարցը դրվում էր երկու հարթության վրա. ա) **մահմեդականների և ոչ մահմեդականների** (տիրող ժողովրդի ու հպատակների), բ) **պավոն-քրիստոնյանների և հայ քրիստոնյանների** (հպատակ ազգերի) իրավունքների հավասարության պահանջով:

Բացի այդ, մարդու իրավունքների իննիրը հայ գործիչները վաստարկում էին թէ՝ մարդ-անձի իրավունքների ու ազատությունների, թէ՝ մարդ-քաղաքացու իրավունքների և պարտականությունների

⁵⁰ Ասեևազրութիւնը Երևափոխանական Ըստիանոր Ժողովու 1870-74 նստաշրջանի, էջ 914:

համատեքստում: *Մարդ-անձ* հարթության վրա պաշտպանվում էին ազգի բնական իրավունքները՝ մերժելով բռնատիրությունը, *մարդ-քաղաքացի* հարթության վրա կարևորվում էին արդարության սկզբունքի, ժողովուրդների խաղաղ գոյակցության ու համերաշխության հաստատումը և ազգերի իրավահավաքարության ճանաչումը:

Եթե ներազգային կեցության մեջ սահմանադրական սկզբունքներով արտահայտվում էր հայ ժողովրդի կամքը՝ ազգային իշխանությունների միջոցով, ապա երկրորդ մակարդակում **սեփական գոյակերպն ազատ ընտրելու ողջ ազգի նպատակը**: Բնական օրենքով հաստատված ազգի բնական իրավունքները պաշտպանելիս ազգային իշխանության իրավագործությունը սահմանափակելի չէ, մինչդեռ դրական իրավունքի գործադրելիությունը կախված էր հպատակ ազգի իրավասության՝ տերության թույլատրած աստիճանից: «Ներքին գործոց անկախությինը» ազգի իրավունքն է՝ ընդունված տերության կողմից:

Հայ երեսփոխանները Ազգային Ժողովում բազմիցս հոչակել են **հայոց բաժանված հաստվածների քաղաքական և իրավական կացության մասին տեղեկատվական իրավունքը**, քանզի նրանք ևս հայցում են օրենքների պաշտպանություն և իրավահավասարություն՝ ձգտելով չկորցնել բնատուր ազգային եւրթունը: Մասնավորապես անդրադառնապով արևելահայոց կեցությանը՝ Ս. Աղաքելյանը հաստատում է, որ ոուս ազգի հարկածներն «ինքնասաց» քաղաքակրթական են, այսինքն՝ բարքերն ապականող, իսկ «...նրա վարչութիւնն աշխարհաջնջ կամ ազգաեր չէ, այլ **աշխարհափխական կամ ազգաշրջական** (ընդգծումը. - Լ.Ս.)»⁵¹: Հետևաբար՝ վտանգվում է ոչ թե ազգի ֆիզիկական գոյությունը, կյութական սեփականությունը, այլ **եղանակ կեցությունը**, ինչն ավելի մեծ կրթական սեփականությունը, այլ **եղանակ կեցությունը**, ինչն ավելի մեծ ավերումների է հանգեցնաւմ: Հայ գործիչները կարևորում են մշակութային-կրթական, հայրենակցական-հոգևոր կապերի ամրապնդումը՝ հրապարակախտության, թարգմանական գրականության միջոցով, ինչպես նաև ոուսական կայսերական օրենքների, պետական ու հասարակական նորմերի իրազեկությունը՝ հասկանալու, թե ազգակիցներն ինչ ազդեցության են ենթարկվում:

Խորհրդարանական կառավարման վերոհիշյալ սկզբունքները կարող ենք գնահատել և՝ կոնկրետ-պատմական սկզբունքով, և՝ արդի քաղաքական իրողությունների համատեքստում: Բնականաբար՝ օտար քաղաքական իրողությունների համատեքստում:

⁵¹ Աղաքելյան Ս., Հայոց աշխարհի, ազգի եւ եկեղեցու ազգայնութեան մասին, Կ.Պօլիս, 1878, էջ 111:

հպատակության ներքո հնարավոր չեր կիրառել խորհրդարանական կառավարման բոլոր այն սկզբունքները, որոնք առաջարրում էին հայ մտածողները, և որոնք կիրառելի են անկախ պետություններում: Բայց զաղակարաքաղաքական ներուժով դրանք չեն կորցրել արդիսականությունը և, որպես տեսական-փիլիսոփայական հիմնադրույթներ, կարող են գիտամեթոդական հիմք ծառայել արդի քաղաքական հայեցակարգերի համար:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում մեկնաբանվում են պաղամենտարիզմի սկզբունքները՝ արևմտահայ ազգային սահմանադրականության համատեքստում: Հիմնավորվում են սահմանադրական օրենքների դերն ու գերակայությունը, ներկայացուցչական դեմոկրատիայի, իշխանությունների բաժանման սկզբունքի նշանակությունը և հայ ազգի ինքնակառակարման ունակությունը: Ազգային բարձրագույն իշխանությունները պետք է ստեղծվեն բազմատիճան ընտրություններով: Սահմանադրությունը ներառում է իրավական պետության մոդել, որի հիման վրա ձևավորվել է ազգային խորհրդարանական կառավարություն:

Ազգային սահմանադրությունը կոչված էր երաշխավորել. ա) ազգի ազատության և իրավունքների պահպանման հնարավորություն, բ) կենտրոնացված և ապակենտրոն կառավարման սկզբունքների հավասարակշռություն, գ) Ազգային ժողովի՝ որպես օրենսդիր իշխանության գերակայություն, դ) Քաղաքական և Հոգևոր ժողովների վարչական իրավահակասարություն, ե) դասային խորականության չեղորացում և սոցիալական ներդաշնակություն: Սահմանադրության բազում հոդվածներ նվիրված են ազգի ներկայացուցիչների իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև սոցիալ-քաղաքական ուժերի հարաբերակցությանն ու համագործակցությանը՝ կարգավորելու քաղաքական գործնթացներն ազգային կյանքում: Հռչակվում են՝ մտքի ազատություն, խոսքի ազատություն, գործունեության ազատություն, ընտրելու իրավունք և բոլոր ժողովուրդների իրավահակասարություն օրենքի առջև:

Բանալի բառեր. Ազգային սահմանադրություն, սահմանադրական կարգ, պաղամենտարիզմ, Ազգային ժողով, ներկայացուցչություն, ժողովրդականական ընտրություններ, խորհրդարանական կառավարման սկզբունքներ:

ПРИНЦИПЫ ПАРЛАМЕНТАРИЗМА В КОНТЕКСТЕ ЗАПАДНОАРМЯНСКОГО КОНСТИТУЦИОНАЛИЗМА

Лилит Сарвазян

*Кандидат философских наук,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

В статье интерпретируются принципы парламентаризма в контексте западноармянского национального конституционализма. Обосновываются роль и верховенство конституционных законов, значение представительной демократии, разделения властей, а также способность самоуправления армянской нации. Высшие национальные власти должны создаваться путем многоступенчатых выборов. Конституция включала модель правового государства, на основе которого формировалось национальное парламентское правление.

Национальная конституция была призвана гарантировать: а) возможность сохранения свободы и прав нации, б) баланс принципов централизации и децентрализации правления, г) верховенство Национального собрания – как законодательной власти, д) административное равноправие Политического и Духовного собраний, е) исключение классовой и политической дискриминации, социальную гармонию. Множество статей Конституции посвящено определению прав и обязанностей представителей нации, а также соотношению и сотрудничеству социально-политических сил, призванных к регулированию политических процессов национальной жизни. Провозглашаются свобода мысли, свобода слова, свобода деятельности, право выбора, а также равенство всех народов перед законом.

Ключевые слова: Национальная конституция, конституционный порядок, парламентаризм, Национальное собрание, представительство, демократические выборы, принципы парламентского правления.

PRINCIPLES OF PARLIAMENTARISM IN CONTEXT OF WESTERN ARMENIAN CONSTITUTIONALISM

Lilit Sarvazyan

*Candidate of Philosophical Sciences,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article refers to the principles of parliamentarism in the context of Western Armenian national constitutionalism. The role and priority of

constitutional law, significance of democracy and meaning of principle of separation of powers, as well as ability of autonomy of the Armenian nation are substantiated in the article. Higher national authorities must be formed by multilevel elections. The constitution includes a legal state model on the base of which the national parliamentary government has been formed.

The National constitution was meant to guarantee: a) ability to protect nation's freedom and rights, b) balance between centralized and decentralized government principles, c) priority of the National Assembly as a legislative power, d) equality of political and religious councils, e) neutralization of class discrimination and social harmony. Many articles of constitution are dedicated to the rights and obligations of the nation's representatives, as well as the correlations and cooperation of sociopolitical powers to regulate political processes in the nation's life. Freedom of thought, freedom of speech, freedom of activities, right to vote and equality before the law for all nations are declared.

Key words: national constitution, constitutional order, parliamentarism, National Assembly, representativeness, democratic elections, parliamentary government principles.

СУЩНОСТЬ КОНЦЕПЦИИ “КОНЦА ИСКУССТВА”: ОТ ГЕГЕЛЯ К ДАНТО

Светлана Арзуманян
*Кандидат философских наук, доцент,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

Концепция “конца искусства”, интерес к которой возрос в связи с различными проявлениями современного искусства, так называемого contemporary art, восходит к эстетике Г.Гегеля. Именно в тексте лекций по эстетике, прочитанных им в Берлинском университете и опубликованных после его смерти слушателем этих лекций его учеником и известным историком искусства Г.Г.Гото, высказывается идея о вполне закономерном процессе исторического развития искусства, когда достигнув высшей ступени своих возможностей, оно теряет ту исключительную роль, которую играло в жизни общества, являясь проявлением абсолютной истины и уступает свое место более высоким формам проявления абсолютного духа - религии и философии.

Как известно, в основном ориентируясь на курс берлинских лекций 1823 года, Г.Гото попытался привести в систему имеющиеся многочисленные записи. Он и не скрывал, что в процессе редактирования создал “некоторые